ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2011թ. թիվ 47-Ա

"ԼՈՌՈՒ ՄԱՐԶ" ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ" ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի "ժէ" ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 17-ի "Լոռու մարզ" թերթի խմբագրություն" պետական հիմնարկը փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին" թիվ 322 որոշման 2-րդ կետով, համաձայն որի "Լոռու մարզ" թերթի խմբագրություն" փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և հիմք ընդունելով "Լոռու մարզ" թերթի խմբագրություն" փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2011թ. մարտի 2-ի ժողովի արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ընկերության բաժնետոմսերը բաժանել հետևյալ կերպ.

51% բաժնետոմսերի տնօրինումը վերապահել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին, 49%-ը՝ ընկերության գործադիր տնօրեն Մանվել Միկոյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2011թ. մարտի 4
ք.Վանաձոր